# ՀՀ Մանկության դատարանի 09.01.2025թ. թիվ ՄՆԴ/3869/04/24 վճռով սնանկ Սեդա Սերյոժայի Խաչատրյանին պատկանող, գրավադրված անշարժ գույքի աճուրդի կազմակերպման և անցկացման մասին

2026-11-06 16:20:50

| | |
|---|---|
| Հայտատու | Ֆիզիկական անձինք |
| Տեսակ | Աճուրդների մասին հրապարակային ծանուցումներ |
| Հիմք | Սնանկության մասին ՀՀ օրենքի 76-րդ հոդված |

30.10.2026թ. ժամը 10։00-ին, ՀՀ, ք.Երևան, Տիգրան Մեծի 65ա հասցեում /8-րդ հարկ, 805 սենյակ/ հայտարարված ՀՀ Սնանկության դատարանի 09.01.2025թ. թիվ ՍՆԴ/3869/04/24 վճռով սնանկ Սեդա Սերյոժայի Խաչատրյանին պատկանող, գրավադրված գույքի բաց աճուրդը չի կայացել հայտեր չլինելու պատճառով:
2026թ. նոյեմբերի 30-ին, ժամը 11:00-ին, ՀՀ Սնանկության դատարանի 09.01.2025թ. թիվ ՍՆԴ/3869/04/24 վճռով սնանկ ճանաչված Սեդա Սերյոժայի Խաչատրյանի սնանկության գործով կառավարիչ Արտակ Պետրոսյանի կողմից, հիմք ընդունելով ՀՀ Սնանկության դատարանի 29.01.2026թ. որոշումը, ՀՀ, ք.Երևան, Տիգրան Մեծի 65ա հասցեում /6-րդ հարկ, 8 սենյակ/ կանցկացվի ՀՀ Սնանկության դատարանի 09.01.2025թ. թիվ ՍՆԴ/3869/04/24 վճռով սնանկ Սեդա Սերյոժայի Խաչատրյանին սեփականության իրավունքով պատկանող և «ԱյԴի Բանկ» ՓԲԸ-ում գրավադրված անշարժ գույքի բաց աճուրդը։
Աճուրդի ներկայացված թիվ 1 լոտի մեկնարկային արժեքը 10 տոկոսով նվազեցված է նախորդ աճուրդի մեկնարկային արժեքից և կազմում է.
Լոտ 1 – ՀՀ, Գեղարքունիքի մարզ ք. Սևան Շինարարների փողոց 4/1 հասցեում գտնվող անշարժ գույք /275.11 քմ ընդհանուր մակերեսով խանութ, 0.044226 հա ընդհանուր մակերեսով հողամաս, անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայական թիվ 26032020-05-0020/ - մեկնարկային արժեքը կազմում է 23.580.050 (քսաներեք միլիոն հինգ հարյուր ութսուն հազար հիսուն) ՀՀ դրամ:
Գույքի աճուրդը կանցկացվի «Պարտապանին պատկանող գույքը հրապարակային սակարկություններով վաճառելու կարգը հաստատելու մասին» ՀՀ արդարադատության նախարարի ՝ 16.03.2020թ. թիվ 116-Ն հրամանի համաձայն:
Աճուրդին մասնակցելու ցանկություն ունեցող անձինք աճուրդի հայտարարությամբ սահմանված ժամկետում՝ բայց ոչ ուշ, քան աճուրդի անցկացման օրվանից հինգ աշխատանքային օր առաջ, մինչև 23.11.2026թ. ներառյալ, կարող են աճուրդի մասնակցության հայտ (այսուհետ՝ հայտ)

ներկայացնել ՀՀ, ք. Երևան, Օտյան 53/2 հասցեում գտնվող ՀՀ Սնանկության դատարանի գրասենյակ՝ հայտը գրասենյակի միջոցով կառավարչին փոխանցելու (տրամադրելու) համար:
Աճուրդին մասնակցելու կարգը և մնացած պայմաններն ու մանրամասները նշված են կից ներկայացված հայտարարության մեջ

Սեդա Սերյոժայի Խաչատրյան աճուրդ 30.11.2026թ. .pdf

37477191076

artakvarpet@mail.ru

ԿՈՏԱՅՔ, ՉԱՐԵՆՑԱՎԱՆ, 6 ԹՂՄ., 16, 23